Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրու՛ գրողի ապրած ժամանակաշրջանը, նրա գրական գործունեությունը և հասարակական-քաղաքական դիմանկարը:
2. Կազմե՛ք սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը (խմբային աշխատանք):
3. Պատմի՛ր քո մանկության տարիներից հետաքրքիր պատմություններ՝ զուգորդելով Թումանյանի կյանքի հետ:
4. Թվարկի՛ր այն բոլոր բանահյուսական ժանրերը, որոնք դարձել են Թումանյանի ստեղծագործությունների հիմնական աղբյուրը:
5. Ինչո՞վ է սկսվում պոեմը, և ի՞նչ գաղափար է արտահայտում այդ հատվածը:
6. Ինչպիսի՞ բնապատկերով է Թումանյանը սկսում պոեմը:
7. Բե՛ր պոեմից տողեր, որոնք արտահայտում են մարդկային բարոյական վեհ արարքներ, ինչպես՝ սեր, ընկերասիրություն, նվիրվածություն, ծնողասիրություն:
8. «Անուշ» պոեմում հեղինակն ինչպե՞ս է ներկայացնում տենչանքի, իդեալի և իրականության հակադրությանը: Ինչո՞ւ իդեալն ու իրականությունը չեն համապատասխանում պոեմում:
9. Ինչո՞ւ են մարդկության զարգացման ավելի վաղ շրջանում կարևորվել հատկապես մարդու ֆիզիկական ուժը, նրա քաջությունը: Պոեմից բե՛ր ասածը հիմնավորող տողեր:
10. Կյանքի անցողիկության գաղափարը ինչպե՞ս է արտահայտվում պոեմում:
11. Դո՛ւրս գրեք «Անուշ» պոեմում գործածված պատկերավորման միջոցները՝ ներկայացնելով նրանց դերը գեղարվեստական պատկեր ստեղծելու գործում (նախագծային աշխատանք):